ՄԻԼԻՑԻԱՆ, ՆԳՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ –ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 1918-1920թթ.

Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությունը 1918-1920 թթ. որոշակի ջանքեր գործադրեց միլիցիայի և առհասարակ Ներքին գործերի մարմինների ստեղծման ու դրանց աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Այն բխում էր երկրում համապատասխան կարգ ու կանոնի, ներքին անվտանգության համակարգի և օրինականության հաստատման, հանցավորության և պետական-պաշտոնական դիրքի չարաշահումների դեմ անզիջում պայքար մղելու անհրաժեշտությունից: 1918-1920 թվականները ոչ միայն տնտեսական մաքառումների ու սովի, այլև պետականության ստեղծման համար պայքարի տարիներ էին: Հենց այդ հանգամանքները նկատի ուներ Հայաստանի Հանրապետության Ներքին Գործերի նախարարներից մեկն այդ տարիներին՝ Ա.Ի. Գյուլխանդանյանը (10 օգոստոսի 1919թ. - 5 մայիսի 1920թ.), երբ խոսելով միլիցիայի, ՆԳՆ այլևայլ մարմինների ստեղծման անհրաժեշտության մասին, նաև հիմնավորում էր այդ կարևոր կառույցների ստեղծման ու ֆինանսավորման, ինչպես նաև կադրային հիմնախնդիրների լուծման կարևորությունը: 1920թ. մարտին Ա.Ի.Գյուլխանդանյանը Հայաստանի խորհրդարանին ներկայացնելով «ՆԳՆ Վարչական մարմնի ու Միլիցիայի 1920թ. սմետայի և հաստիքների նախագիծը», նշում է. «Պետության այս օրգանի նկատմամբ այսպիսի վերաբերմունքը իմ կողմից լրիվ հասկանալի է, քանի որ բոլոր պետություններում, ուր իշխում է իրավակարգը, միլիցիան հանդիսանում է այն անկյունաքարը, որի վրա խարսխված է պետության ապահովությունն ու հանգստությունը»:[1]

1918-20թթ. տնտեսաքաղաքական քայքայվածության, սովի և պարենավորման հիմնահարցերը, հետևաբար նաև այդ հողի վրա առաջացած պետական-պաշտոնական դիրքի չարաշահումները ներքին քաղաքականության հանգուցային խնդիրներից էին, և մշտապես դառնում էին կառավարության քննարկման առարկա, քանզի դրանից էր կախված և բանակի, և միլիցիայի, և Ներքին գործերի ցանկացած մարմնի թե ստեղծումը և թե դրանց աշխատանքների արդյունավետ կազմակերպումը: «Սովամահությունը համատարած է: Ալեքսանդրապոլում, Արփաչայի ափերին հավաքվել իմ 100.000 գաղթականություն, որոնք սովի մեջ իմ գտնվում և բացօթյա մնացել: Այս հարցի մասին բազմաթիվ

[1] Տես՝Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ՝ՀԱԱ), Ֆ.Պ- 199, ց. 1,գ.160,թ.32:

անգամ կառավարությունը դիմել է Դաշնակիցներին, բայց դեռ պատասխան չկա: Երկրի պարենավորումը սոսկալի դրության մեջ է: Կառավարության ջանքերը արդյունք չեն տալիս և մեր ժողովուրդը սովամահ է լինում: Այն շրջանները. Ղազախ և այլն, որ քիչ թե շատ հաց ունեին, հայ-վրացական կոնֆլիկտի ժամանակ տվին այն զօրքին և այդպիսով նրանք էլ հիմա գտնվում են սովի ճիրաններում. մեր միակ հույսը դրսից ստանալու վրա է», - ընդգծում է իր ելույթում ՀՀ պարենավորման նախարարը 1919թ. հունվարի 25-ի խորհրդարարանի նիստում,[2] ինչի հետ ոչ բոլորն են համակարծիք լինում, սակայն նրանք էլ իրենց ելույթներում ընդգծում են իրավիճակի լրջությունը, այդ թվում և Ներքին գործերի նախարարը, որը քիչ խնդիրներ չուներ այդ բնագավառում:[3]

Պարենավորման և հետևաբար այդ հողի վրա առաջացած քրեածին հիմնախնդիրները լուծելու համար նույնիսկ ՀՀ պառլամենտի թուրք պատգամավոր Ասադ Բեգ Աղաբաբբեգովը Ներքին գործերի նախարարին և այլ պետական-ուժային կառույցների ղեկավար այրերին խորհուրդ էր տալիս ստեղծել ամուր իրավակարգ, զսպելով նաև զանազան խմբերին:[4] Իսկ արդեն ՀՀ Խորհրդարանի 1919թ. փետրվարի 11-ի նիստում ունեցած ելույթում նույն թուրք պատգամավորը պարզապես ընդգծում է հետևյալը. «Ընդհանրապես պետք է նկատել, որ այն շրջաններում, որտեղ վարչական պաշտոնյաները վատ են տրամադրված դեպի թաթարները, այնտեղ վերջիններս մեծապես տուժել են. ներկա դեպքում՝ Էջմիածնի գավառը, Նոր Բայազետը և ընդհակառակը, Ղարսում և Սուրմալվում նման դեպքեր չեն եղել: Ի՞նչ է նշանակում քյուրդ Ղազդ, մի՞թե չի կարելի նրան պատժել, եթե նա պատժվի, թաթար ազգաբնակչության մեջ վստահություն կառաջանա դեպի կառավարությունը»:[5] Իհարկե, հայ պատգամավորները անհամաձայնություն արտահայտեցին այդ տեսակետի հետ, և մասնավորապես Ս. Վրացյանը, սակայն հարկ է խոստովանել, որ դրա մեջ որոշակի ռացիոնալ հատիկներ կան: Իսկ ճշմարտությունը նրանում էր, որ թուրք պատգամավորը պարզապես հասկացնում էր, որ միայն բռնի եղանակներով չի կարելի հարցերը լուծել, և պատժելով միայն իրենց համար անցանկալի այլազգիներին, դարձյալ խնդիրը չի լուծվում, և ՀՀ կառավարությունը պետք է օրենքի կիրարկման դաշտը տարածեր հավասարապես ազգային բոլոր տարրերի վրա, և գուցեև ձգտեր ինչ-որ տեղ լեզու գտներ այլազգիների հետ, ինչպես դա այսօր կա բոլոր լուրջ երկրների պրակտիկայում. անշուշտ, կառավարման հրամանատարական առաջնային լծակները պահպանելով սեփական ձեռքերում: ՀՀ Խորհրդարանի մի այլ պատգամավոր, ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ՝ Ե. Հարությունյանն այդ

---

[2] Նույն տեղում, Ֆ.Պ-198,ց.1,գ.15,թ.88-89:
[3] Նույն տեղում, թ.89:
[4] Նույն տեղում, թ.91:
[5] Նույն տեղում, գ.24,թ.91:

կապակցությամբ նշելով, որ Դաշնակիցները լավ ծանոթ են իրենց վիճակին, սակայն միևնույն ժամանակ իրենք պետք է «ստեղծեն ներքին կյանքում իրավակարգ»: Խոսքի վերջնամասում Ե. Հարությունյանը գալիս է սկզբունքային եզրակացության. «Մենք պետք է վերացնենք խմբերը, որոնք երկրի ներսում մի երկրորդ իշխանություն են հաստատել, և դրանց շնորհիվ է, որ թուրքերը ներս չեն թողնում մեզ և ցորեն չեն տալիս»:[6]

Վերջապես 1919թ. փետրվարի 11-ին պարենավորման կապակցությամբ առաջացած սովի և անկարգությունների, հանցագործությունների և պետական-պաշտոնական դիրքի չարաշահումների ու դրանց հաղթահարման խնդրում երկրի Ներքին գործերի մարմինների դերին անդրադառնալով, Հայաստանի խորհրդարանում ունեցած իր ելույթում ՆԳ նախարար Ալ. Խատիսյանը նշում է, որ «անկարգությունները գլխավորապես պայմանավորված են սովով»[7]:

Երկրում պարենային-տնտեսական հիմնախնդրի լուծման, ներքին իրավակարգի ամրապնդման ու զանազան «խմբերի» սանձարձակությունների հաղթահարման տեսանկյունից շատ արդիական է սոցիալիստ-հեղափոխական պատգամավոր Լ. Թումանյանի տեսակետը. «Մեր երկրի չարիքը ոչ թե նրա մեջ է, որ չկար մահվան պատիժ, այլ նրանում, որ պատիժներ չէին գործադրվում և հանցավորներն ազատ ման են գալիս փողոցներում»:[8]

Հայտնի է, որ այդ տարիներին Հայաստանը գտնվում էր տնտեսական-պարենային ճգնաժամի ճիրաններում, որն այդպես էլ չհաջողվեց մեղմել, այն զգալի չափով հաղթահարվեց խորհրդային կարգերի ժամանակ՝ ավտորիտար, կտրուկ բռնամիջոցառումների շնորհիվ, որոնք հատուկ են հետամնաց երկրներին, որոնք չունեն կառավարման, պատմամշակութային կանոնավոր զարգացման, և մասնավորապես պետաքաղաքական կառավարման բազմամյա ուսանելի և անհրաժեշտ փորձ: Սակայն մեր կողմից քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևոր է հատուկ ընդգծել, որ պարենային՝ հանապազօրյա հացի և առհասարակ տնտեսական հիմնախնդիրը տանջալից խնդիրների առաջ կանգնեցրեց նաև Ներքին գործերի նախարարությանը, միլիցիային, որովհետև գաղտնիք չէր, որ այդ ծանր և հուսահատ հերոսականությամբ լի օրերին շատերը նախ և առաջ միլիցիայի մեջ էին մտնում, ինչպես մեծամասամբ նույնիսկ և մեր օրերում՝ այդ մի կտոր հացի համար, մի քիչ այլ բովանդակությամբ և գուներանգներով: Եվ ասել, թե այն օրերին, ինչպես և այսօր չկային պետական աստիճանավորներ ու ծառայողներ, որ մտածեին այդ հիմնախնդրի լուծման համար և բոլորն անխտիր մտածում էին պետական գանձարանը, ժողովրդի ունեցվածքը կողոպտելու և հասարակությունը անաս-

---

[6] Նույն տեղում, գ.15,թ.92:
[7] Նույն տեղում,թ.135-136:
[8] Նույն տեղում, գ.24,թ.17:

նական ու անբնական տագնապի մեջ պահելու մասին՝ սխալ կլինի: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ Ներքին գործերի նախարարության որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ ևս ըմբռնում էին, որ անհրաժեշտ է այդ հիմնախնդիրը՝ հացի խնդիրը լուծել, այդ թվում նաև միլիցիոներներին ապահովել օրապահիկ հանապազօրյա հացով, թե չէ ոչ մի արդյունավետ և առավել ևս բարեխիղճ աշխատանքի մասին խոսք անգամ չի կարող լինել: ՀՀ Նախարարների խորհրդին ուղղված 1920թ. հունիսի 14-ի բացատրական գրությունում Ներքին գործերի նախարարի պարտականությունները կատարող Ս. Թորոսյանը նշում էր հետևյալը. «Հանրապետության ներքին կյանքի ապահովության համար անհրաժեշտ է ունենալ ուժեղ միլիցիա և նրան ապահովել տնտեսապես: Ներկայիս դրամական վարձատրությունը շատ չնչին օգնություն է հասցնում, հարկավոր է պարենավորել նրանց: Ամենից առաջ պետք է հաց տալ, ուստի դիմելով Ձեզ, խնդրում եմ յուրաքանչյուր միլիցիոների օրական մի ֆունտ ձրի հաց տաք»:[9] Որոշ ժամանակ անց,1920թ. հունիսի 16-ին կառավարությունը քննարկելով այդ հարցը, օրենք է հրապարակում հանրապետության միլիցիոներներին օրական մի ֆունտ ձրի հաց տալու համար:[10]

Իրավամբ ըմբռնելով իրադրության լրջությունը, Ներքին գործերի նախարարը 1920թ. հուլիսի 1-ի Նախարարների խորհրդակցությունում ընդգծում է, որ հենց Ներքին գործերի նախարարությունն է պետական իշխանության սյունը երկրում և այն հենարանը, որին կոթնելու են մյուս նախարարությունները:[11] Սակայն միևնույն ժամանակ ընդգծվում է, որ այդ հենարանը վերին աստիճանի թույլ է, ուստի և մեր պետական ապարատն ամբողջությամբ թույլ է գործում: Մարդկային գործոնի կարևորության հարցը շեշտվում է նաև 1920թ. օգոստոս-նոյեմբերին թվագրվող Ներքին գործոց նախարարի մի հաղորդագրության մեջ՝ կապված ՆԳՆ բաժինների կողմից քաղաքացիներից ստացված բազմաթիվ գրությունների ստացման հետ: Նրանում ասվում էր. «Համաձայնվելով միանգամայն, որ մեր մանուկ հանրապետության կարգերը դեռ շատ հեռու են կատարելատիպ լինելուց, որ պաշտօնյաները դեռ շատ անփորձ են իրենց ուսերի վրա դրած հայրենիքի հանդեպ պարտականությունների լրիվ և բավարար կատարելու համար, և որ ամենագլխավորն է, ըստ մեծամասամբ այդ պաշտօնեաները հավաքված լինելով պատահական անձնավորություններից, որոնց ոչ անցյալն է մեզ ծանօթ, և ոչ էլ ներկան, կարող են թույլ տալ կեղծիքներ, կաշառակերություն և մեծ ոճիրներ, մենք մեծ կարիք ունենք հասարակական գործակցության՝ այդ պաշտօնյաների վրա կօնտրոլ սահմանելու, և մեղավորներին պատժի ենթարկելու համար»:[12] Ժամանակաշրջանի

---

[9] Նույն տեղում՝ Ֆ.Պ-199,գ.1,գ.115, մաս III,թ.174:
[10] Նույն տեղում, թ.175-176:
[11] Նույն տեղում, Ֆ.Պ- 201,գ.1,գ.287,թ.4:
[12] Նույն տեղում, գ.286,թ.6:

պաշտոնական այրերին, միլիցիապետերին, դատավորներին և այլոց բնութագրելու տեսանկյունից հատկանշական է «Հայաստանի աշխատավորի» մեջ արտահայտված մի տեսակետ. «Մեր պաշտոնեության 90 տոկոսը զեղծարար է: Զեղծում ու կեղծում են ամենքը, ալան-թալան են անում բոլորը, ովքեր ծույլ չեն, որովհետև որքան շատ են կեղծում ու հափշտակում՝ այնքան բարձրանում է նրանց աստիճանն ու պատիվը»:[13]

Փաստերն ինքնին ավելի խոսուն են, հնչեղ և համահունչ ներկա ժամանակների ոգուն: Այսպես, դեռ 1919թ. հունվարին միայն վարչակազմի և միլիցիայի պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցվել էր 23, իսկ փետրվարին՝ 29 քրեական գործ: Կալանավորվել էին Երևանի Քաղաքային և Քրեական միլիցիայի պետերը: Կատարված հանցագործությունների շարքում՝ կողոպուտներ, բռնաբարություններ, պաշտոնական դիրքի կոպիտ չարաշահումներ, ծեծ և խոշտանգում, ապօրինի բռնագրավումներ և այլն: Իսկ 1919թ. մարտի 6-ին Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարը պարզապես հետևյալն է գրել Ներքին գործերի նախարարին. «Պետք է անմիջապես հեռացնել Նոր Բայազետի ողջ վարչակազմին, որի համատարած հանցավորությունը երևում է Արտակարգ Հանձնաժողովի կողմից կատարված քննությունից»:[14]

Ավելին, հենվելով Արտակարգ Քննչական հանձնաժողովի կողմից կատարված քննության վրա, քրեական գործեր հարուցվեցին Ղարաքիլիսայի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Էջմիածնի, Դարալյագյազի, Նոր Բայազետի գավառային կոմիսարների, Երևանի գավառի, Երևանի երկաթուղային կայարանի, Նոր Բայազետի գավառի, Էջմիածնի երկաթուղային կայարանի, Նոր Բայազետ քաղաքի, Էջմիածնի գավառի, Ղարաքիլիսայի գավառի միլիցիայի պետերի և այլ պաշտոնյաների նկատմամբ: Քրեական հետապնդում էին սկսված ՆԳՆ, պարենի, ֆինանսների, ժողովրդական կրթության, արդարադատության և այլ նախարարություններում, Զինվորական, Փոստային և հեռագրային, Երկաթգծի և այլ գերատեսչություններում, ինժեներական, հողագործության և այլ վարչություններում աշխատող տասնյակ պաշտոնատար անձանց նկատմամբ: Եվս մեկ խոսուն փաստ. կալանավորվեցին Հայաստանի խորհրդարանի անդամ Սիրակ Գրիգորյանը, խորհրդարանի գրասենյակի պետ Տեր-Մկրտչյանը և ուրիշներ:[15]

Առավել վատ վիճակ ստեղծված էր գավառներում, ուր միլիցիապետերը և կոմիսարները իրենց թույլատրում էին այն ամենը, ինչ խելքներին փչի, և երկրում տիրող քաջքայվածության և համատարած աղքատության մթնոլորտում օրը ցերեկով զբաղվում զազրելի կողոպուտներով և իրենց հայրենակիցների ունեցվածքի բացահայտ ալան-թալանով: 1919թ. կեսերին Հայաս-

---

[13] Հայաստանի աշխատավոր, 1919, թիվ 81:
[14] Տես՝ Ավագյան Ռ.Զ., Հանցավորությունը Հայաստանում, Եր., Նոյյան Տապան, 1997, էջ17-17,19:
[15] Նույն տեղում, էջ 31:

տանի Տարածքի Վարչակազմի ու միլիցիայի կոմիսարը միլիցիայի տեսուչ Շահինյանին գրել էր այն մասին, որ Ղազախի Պիգիս գյուղի բնակիչները «բողոքում էին տեղամասային կոմիսար Քալանթարյանի անօրինական գործողությունների դեմ, որն առանց քննության ու դատի պահանջում է տարբեր անձանցից հափշտակված դրամը. մտրակի ուժով մեկից վերցնում է տասնյակ հազարներ և փոխանցում ուրիշներին. իր իշխանությամբ կալանավորում է մարդկանց, ծեծելով նրանց ինչպես անասունների: Ծեծի ազդեցության տակ որոշ ընտանիքներ զրկվել են բանվորական ձեռքերից և թաքնվել մուսուլմանական գյուղերում»:[16]

Իրավակարգի, կարգ ու կանոնի վիճակով ավելի բարվոք չէր վիճակը էջմիածնի և մասնավորապես Սուրմալուի գավառներում, ինչի մասին պարզ է դառնում նույնիսկ միայն այնտեղ գնացած պառլամենտական հանձնաժողովի նյութերից, որի մասին զեկուցվել է պառլամենտի 1919թ. դեկտեմբերի 9-ի նիստում: Դրանցից ակնհայտ է դառնում, որ բարոյալքություն սերմանողների առաջին շարքերում էին հենց գավառային կոմիսարները, թաղապետները, միլպետները և այլք, որոնք իրենք էին խրախուսում ալան-թալանը, կողոպուտը և ավարառությունները գավառներում, գյուղերում՝ այսինքն իրենց վստահված տեղամասերում: Եվ որպեսզի ասվածն ավելի դիպուկ լինի և ամբողջական, մենք կմեջբերենք մի հատված պառլամենտական հանձնաժողովի եզրակացությունից. 1. «Հետաքրքիր է Աշտարակի շրջանային կոմիսարների փոփոխության պատմությունը: Հանրապետության գոյության առաջին ամիսներում այնտեղ կոմիսար էր արապորշչիկ Նիկողայոս Թումանյանը, որը գործը լավ էր վարում և եռանդուն ծառայություն մատուցեց Բաշ-Աբարանի կռիվների ժամանակ: Առանց հիմքերի նրան հեռացրին և նշանակեցին մի սպա՝ Արտավազդ Ատոմյան կոչված, որի ժամանակ Աշտարակի շրջանում թալաններ կազմակերպվեցին. վերջը նա սպանեց Ֆելդշեր Նիկողոսին՝ մի շատ օգտակար մարդու, նոր հեռացավ Աշտարակից: Այժմ ծառայում է Ալեքսանդրապոլում, զինաժողովի կոմիսարի գործերում և շարունակում է գաղտնի սպառնալիքներ տալ Աշտարակում եղած իր հակառակորդներին: Ապա նշանակվում է Թամասպ անունով մի սպա, որին ժողովուրդը համակրում էր: Նա էլ վախենալով «մաուզերիստների» սպառնալիքներից, թողնում է պաշտոնը: Նշանակվում է Գաբօ Մելիք-Աղամալյանը, տարիքով սպա, որն զբաղված է լինում կաշառքներով. հատկապես եկամտի աղբյուր է լինում հասարակական կոմիսարների ընտրությունները: Ամեն մի թեկնածուից 10.000 ռ. է ստանում, ընտրություններն անում, ապա բեկանում և կրկին ընտրություն նշանակում և այլն, այնուհետև տեղական ինտելիգենցիան խնդրեց մեզ՝ միջնորդել, որ Արտաշես Թուխյանը չնշանակվի. վերջինս 1917թ.-ին հեղափոխության առաջին շրջանում, ընտրվել է կոմիսար, մասնակ-

[16] Նույն տեղում, էջ 28-29:

ցել է նույն թվի ամռանը էջմիածնի գավառի նախկին կոմիսար Ալթունյան Արգամի կողմից քրդերի վրա կազմակերպած արշավանքին, որի նպատակը հարուստ քրդերին թալանելն էր: Թուխյանը այդ թալանից մասն է ստացել: Իր այդ գործի համար նույն թվականի սեպտեմբերին Աշտարակի շրջանի առաջին ընտրովի գործադիր կոմիտեի առաջին նիստին միաձայն դուրս է արվել. երբ նա վերջերս նշանակվել է կոմիսար և գնացել Աշտարակ, ոմանք առանց քաշվելու իրենց դժգոհությունն են արտահայտել և ասել, որ դիմել են պառլամենտական կոմիսիային և խնդրել, որ իրենք Թուխյանին չնշանակեն: Նա պատասխանել է, որ ոչ մի պառլամենտական կոմիսիա իրեն չի կարող հեռացնել: «Տրդատյանը» սաղ լինի, քանի նա կա, իրեն ոչ ոք չի կարող հեռացնել: Տրդատյանը հանրապետության ադմինիստրացիայի ու միլիցիայի վարիչն է. 2. Հանցավորների անպատիժ մնալը: Գավառում ամենքը նկատում ին, մեզ էլ հայտնում, որ հանցավորները՝ մանավանդ աչքի ընկնողները, չեն պատժվում: Սարդարապատի շրջանի նախկին կոմիսար Արղությանը, որ մեղադրվում է կողոպուտի, կաշառքի, հարկերի խորացնելու, զենք վաճառելու և յուրացնելու մեջ, չի բանտարկվել և այլև ազատ է թողնվել, և նա ծածկվել է: Էջմիածնի շրջանի նախքին կոմիսար Մնացական Ղուշչյանը, որ մեղադրվում է Սարդարապատի շրջանի թալանի մեջ, մաուզերը վրան կախած ազատ շրջում է Երևանում և Աշտարակում: Հաճախ գանգատվում են դասալքության պատճառով, բայց գավառական իշխանությունները ինքն է հանցավոր, խեղճերին հավաքում ին, իսկ ուժեղներեն ազատվում ին նույնիսկ «օրինավոր» միջոցներով: Բայց թե փոքրերին պիտի սպանել, մեծերին ազատ թողնել, մի թե կառավարության գավառական ագենտները ավելի հայտնի անունները չէին ճանաչում այդ ասպարեզներում: Ոչ մի երաշխավորություն չկա, որ ավազակությունն ու շանտաժը կրկին չի վերսկսվի, սակայն քանի որ Հայաստանի վրայից այդ որդը (ուորդը) սուր դանակով չի կտրվի, ժողովրդի կյանքը չի հանգստանա: Էջմիածնի և Սուրմալուի գավառների պառլամենտական հանձնաժողովի նախագահ ու զեկուցանող Սահակ Թորոսյան»:[17]

Հենց այս բնույթի արատավոր գործողությունների խորքային էության ըմբռնման և ժամանակաշրջանը ընկալելու տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում նաև Հ.Հ.Դաշնակցական կուսակցության 1919թ. սեպտեմբերի 28-ի Ծաղկածորի շրջանային ժողովի մասնակիցների դիմումագիրը՝ ուղղված Հ.Հ.Դաշնակցության IX համագումարին կամ Ընդհանուր ժողովին (1919թ. սեպտեմբեր-նոյեմբեր), նրա պատգամավորներին և ղեկավար կազմին, որն իրենից ներկայացնում է պետական-պաշտոնական դիրքի չարաշահման, կուսակցական-քաղաքական պաշտոնեության կողմից բնակչության և իրենց ընտրող զանգվածների նկատմամբ հանցագործ վերաբերմունքի

[17] ՀԱԱ, Ֆ.Պ- 198, ց.1,գ.2,թ.50-51:

ներկայացման դասական փաստ: Այսպես, ՀՀՌ Կենտրոնական Կոմիտեին հասցեագրված նշված դիմումագրում ասվում էր, որ դեռ օգոստոսի 19-ին, 20-ին և 21-ին իրենք բողոքագրերով դիմել են ՀՀ Դաշնակցության Կենտրոնական Կոմիտեին՝ բողոքելով շրջանային կոմիսարի և նրա օգնականի ապօրինի, երբեմն էլ գազանաբարո գործողությունների, պետական-պաշտոնական դիրքի չարաշահման դեմ ի վնաս բնակչության, խնդրելով պատժել մեղավորներին, սակայն ապարդյուն, որից էլ ելնելով որոշել են դիմել ՀՀՌ IX Ընդհանուր ժողովին: Գտնելով, որ ներկայումս շրջանային կոմիսարի և միլիցիոներների վարմունքը ավելի վատն է, քան ռուս ժանդարմների և նույնիսկ տաճիկ ենիչերիների ժամանակ (խոտի դեզերի հրդեհում, մարդկանց գազանաբարո ծեծ, սպանություններ, բռնաբարություններ և այլն), որ համատարած կաշառակերությունը և անարդարությունները ծայրահեղությունների են հասել, իսկ կոմիսարը և միլիցիոներները միմիայն իրենց սեփական գրպանների տարողությունների մասին են մտածում, ինչպես նաև իրենց կամայական վերաբերմունքով դասալիք դարձնում զորակոչի ենթարկված զինվորներին, ազատելով հարուստ մարդկանց հոռացած զավակներին՝ որպես քողածածկույթ ընտրելով Հ.Հ.Դաշնակցության անունը և հեղինակությունը, Ծաղկածորի շրջանային ժողովի մասնակիցները խնդրում էին իրենց ազատել Հայ Հեղափոխական Դաշնակցության անունը վարկաբեկող և արատավորող պետական-գավառային այդպիսի պաշտոնյաներից, սպառնալով հակառակ դեպքում անջատվելու Դաշնակցության կենտրոնից: Դիմումագրի հեղինակները զգուշացնում էին, որ զանազան աթոռների վրա բազմած դաշնակցության վարիչները լրջորեն մտածեն, չմոռանան հունիսի 21-ի պառլամենտական ընտրությունները, որի ժամանակ իրենց ընտրողները շուրջ 14 հազար քվե են տվել իրենց, որպեսզի հայ գեղջուկը երանի չտա հին Նիկոլայի ռեժիմին, խնդրելով մաքրել իրենց շարքերը սրիկաներից, քանի դեռ ուշ չէ, և մի քննիչ հանձնաժողով ուղարկել Ծաղկածոր: Սույն կարևոր և շատ հետաքրքիր դիմումագրի վրա կա մակագրություն, որով հանձնարարվում էր Դատական հանձնաժողովին տալ իր եզրակացությունը, ինչպես նաև այդ մասին տեղեկացվում էր Ներքին Գործերի նախարարին:[18]

Անդրադառնալով հանցավորության երևույթին ու պատճառներին, Ներքին Գործերի նախարարի օգնական Ս. Թորոսյանը Նախարարների խորհրդին ուղղված վերը նշված 1920թ. հուլիսի 1-ին խորհրդակցությունում ունեցած իր ելույթում ընդգծում է հետևյալը. «Եվ մինչև այսօր այդ արարքների համար ոչ ոք չի պատժվել և նրանց հոգում ամրացել է այն համոզումը, թե Հայաստանում կան որոշ մարդիկ, որոնք թալանի, կողոպուտի ու սպանության համար չեն պատժվում»:[19]

---

[18] Նույն տեղում, Ֆ.Պ-201, ց.2,գ.616, թ.27:
[19] Նույն տեղում, Ֆ.Պ- 201,ց.1,գ.287,թ.4-6:

Միլիցիայում գործերը կարգավորելու ուղղությամբ պետության հետագա քայլերը ևս հետաքրքիր են և ուսանելի: Հայտնի է, որ 1920 թվականի հուլիսի 6-ի նիստում Նախարարների խորհուրդը որոշեց Հայաստանի Հանրապետության մեջ եղած բոլոր միլիցիոներներին տալ տարեկան երկու ձեռք հագուստ և հանձնարարեց Ներքին գործերի նախարարությանը ներկայացնել համապատասխան նախահաշիվ: Կատարելով Նախարարների խորհրդի որոշումը, Ներքին Գործերի նախարարը շուտով ներկայացնում է այդ նախահաշիվը, միլիցիոներների հագուստի արժեքի մասին, ավելացնելով, որ միլիցիոներների թիվը հաստատված նախահաշվի համաձայն կազմում է 6779 հոգի: Սակայն Ներքին գործերի նախարարի պարտականությունները ժամանակավորապես կատարող Ս. Թորոսյանը ասվածին նաև ավելացնում է, որ բացի վերը նշված թվով մարդկանց համար նախահաշիվ կազմելուց, կարգադրված է կազմել նախահաշիվ Դիլիջանի միլիցիայի համար՝ 1000 հոգուց, Վեդի-Բասարի՝ 120,Արալիխի՝ 120 և լրացուցիչ ցուցակ՝ Վայոց ձորի համար՝ 112 հոգուց: Սույն գրության ավարտամասում նաև ավելացվում է ասվածին, որ ի նկատի ունենալով, որ Նախիջևանի շրջանը ևս միանալու է Հայաստանին և պետք է կազմվի շրջանի պահպանության համար անհրաժեշտ միլիցիայի թիվը, որը դեռ պարզ չի, ընդամենը, ուրեմն, հարկավոր է նախահաշիվ կազմել 10 հազար միլիցիոներների համար: Հաշվարկելով, որ ամեն մի ձեռք հագուստը կարժենա 50.000 ռուբլի, իսկ անհրաժեշտ է ամեն մի միլիցիոների համար նկատի ունենալ 2 ձեռք հագուստ, հետևաբար ընդամենը անհրաժեշտ կլինի վարկ բացել 10 միլիոն ռուբլու չափով: Սույն նախագիծը օրենքի ուժ ստացավ և հաստատվեց 1920 թ. օգոստոսի 18-ին:[20]

Ուշագրավ է նաև միլիցիայի նկատմամբ պետության ու կառավարության վերաբերմունքի դրսևորման մի ձև ևս. այսպես 1920թ. կեսերին ընդունված օրենքներից էր նաև «1919թ. Նախիջևանի դեպքերից հետո Պարսկաստան անցած կամ Նախիջևանում և Շարուրում գերի մնացած ու այժմ վերադարձող նախկին միլիցիոներներին և այլ պաշտոնյաներին բավարարելու համար Ներքին Գործերի Նախարարության անունով 300.000 ռ. վարկ բանալու մասին» Օրենքը:[25] Տեր կանգնելով սեփական քաղաքացիներին, Հայաստանի պառլամենտը, և հետևաբար պետությունը պատվաբեր քայլ էին կատարում լիարժեք պետություն դառնալու դժվարին գործընթացներում: Սա ևս վկայում է այն լուրջ հայտի մասին, որ հայկական պետությունը անգամ այդ դժվարին տարիներին ներկայացնում էր միջազգային ասպարեզում, փորձելով տեր դառնալ սեփական ճակատագրին ու պատմությանը: Հենց այս քայլերն են այսօրվա տեսանկյունից ուսանելի ու քրեստոմատիական:

---

[20] Հայաստանի հանրապետության պառլամենտի օրենքները,Եր., 1998, էջ 344:
[25] Տես՝ Նույն տեղում,էջ 332, ՀԱԱ, Ֆ.Պ- 199, ց.1,գ.160,թ.167: